# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ձեզ եմ ուղարկում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գալուստ Սահակյանի և Ռաֆիկ Պետրոսյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Հ. Աբրահամյան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2010թ. սեպտեմբերի 7

Ն – 1011

52
012-19677
08 09 10

00615

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

*7 սեպտեմբերի 2010թ*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովիկ Աբրահամյանի, Գալուստ Սահակյանի և Ռաֆիկ Պետրոսյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկման համար գլխադասային նշանակել Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը:

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

---

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն նախագահ.

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածներով, օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ ենք ներկայացնում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծին կցվում են՝

ա) նախագծի ընդունման հիմնավորումը,

բ) օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Խնդրում ենք սահմանված կարգով օրենքի նախագիծը դնել շրջանառության մեջ:

ԱԺ պատգամավորներ՝

Մուտք N. 27-139
«07» 09 2010թ.
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Դ-974-07.09.2010-ՊԱ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 302-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 305-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև դատական ակտն ընդունելը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի երկրորդ մասի «132» թիվը փոխարինել «131» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 305-րդ հոդվածի երրորդ և չորրորդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենսգրքի 123-129-րդ, 131-134.1-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում, տուգանքը վճարելու դեպքում տուգանքի չափը կրճատվում է հիսուն տոկոսով, բացառությամբ տուգանքի ժամկետը տարաժամկետելու դեպքի: Տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը կրկնապատկվում է, իսկ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում է, որը ենթակա է դատական կարգով բռնագանձման:

«Սույն հոդվածի երրորդ մասում նշված հոդվածներով սահմանված տուգանքը չվճարվելու դեպքում տուգանքի գումարի բռնագանձման համար վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է 60-օրյա ժամկետը լրանալուց հետո՝ 120 օրվա ընթացքում, դիմել դատարան:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության մասին

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման հիմնական նպատակը Օրենսգրքի 305-րդ հոդվածով նախատեսված վարչական տուգանքի վճարման ապահովմանն ուղղված մեխանիզմների կատարելագործումն է: Մասնավորապես, առաջարկվող փոփոխությունները նպատակ ունի շահագրգռել իրավախախտում կատարած և օրենքով սահմանված կարգով տուգանված անձանց՝ վարչական տուգանքը վճարել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ գործը չհասցնելով դատական ատյանին: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է հստակեցնել և որոշ համաչափություն ապահովել տուգանքի և դրա նշանակման նպատակի կամ մոտիվացիայի միջև, քանի որ նման համաչափության բացակայությունը հանգեցնում է նշանակված տուգանքների համատարած չվճարմանը, և արդյունքում՝ ժամկետանց պարտավորությունների կուտակմանը:

Այս կապակցությամբ նախագծով առաջարկվում է լրացուցիչ հնարավորություններ ստեղծել իրավախախտում կատարած և օրենքով սահմանված կարգով տուգանված անձանց համար՝ տեղում կամ 3 օրվա ընթացքում տուգանքը վճարելու դեպքում տուգանքի չափը 50 տոկոսով կրճատելու, 30 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը կրկնապատկելու, 60 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկելու և միայն այդ տուգանքի վճարումից չարամտորեն խուսափողների նկատմամբ կիրառել դատական կարգով տուգանքի բռնագանձման մեխանիզմը, այդ կերպ դատարանին հնարավորություն ընձեռելով վճարման ժամկետ սահմանել առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ տուգանքը վճարել մաս առ մաս նույն ժամկետում, սահմանելով տուգանքի վճարման ժամանակացույց: Այս դեպքում է, որ հաշվի է առնվում վարչական պատասխանատվության առանցքային՝ արդարության կատարված արարքին համապատասխան պատասխանատվության միջոցի համաչափության, սույժի անհատականացման և տարբերակման սկզբունքները, քանի որ տուգանքը, որպես տույժի տեսակ՝ պատասխանատվության միջոց կիրառվում է նպատակ ունենալով կանխել ինչպես իրավախախտողի, այնպես էլ այլ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը և ոչ թե գումարի հավաքագրումը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզվել է, որ Իսպանիայում և Եգիպտոսում տեղում վճարելու դեպքում տուգանքը կրճատվում է 50 տոկոսով:

Ֆրանսիայում տուգանքը տեղում կամ 24 ժամվա ընթացքում վճարելու դեպքում այն կրճատվում է 30 տոկոսով, մինչդեռ օրենքով սահմանված 30 օրվա ընթացքում չվճարելու դեպքում այն ավտոմատ ավելանում է՝ նշանակալի չափով, իսկ տուգանքի որոշումը փոստով ստանալու պահից 7 օրվա ընթացքում չվճարելու դեպքում տուգանքը ավելանում է հետևյալ համաչափությամբ՝ 7 օր հետո վճարելու դեպքում ավելանում է 50 տոկոսի չափով, իսկ 30 օր հետո՝ եռապատկվում է:

Գերմանիայում տուգանքը տեղում կամ 3-7 բանկային օրվա ընթացքում վճարելու դեպքում այն 30-ից 50 տոկոսով իջեցվում է, իսկ մեկ ամիս և ավելի չվճարելու դեպքում 2-3 անգամ ավելանում է:

Որոշ պետություններում Բելգիա, Իսրայել, Իսպանիա, ԱՄՆ տուգանքը սահմանված ժամկետում չվճարելու համար նախատեսվում է տրանսպորտային միջոցի բռնագրավում՝ որպես գրավ և տուգանային հրապարակում այն պահպանելու համար որոշակի վճար, իսկ Ճապոնիայում՝ վարորդական իրավունքի զրկում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման առընչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն այլ օրենքների ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀՈԴՎԱԾ 302. ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ

Վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, բացառությամբ 123, 123.1, 123.2, 123.3, 123.4, 123.5, 124, 124.1, 124.2, 124.3, 124.4, 124.5, 124.6, 125, 126, 128, 129, 131, 132, 133, 140, 158 հոդվածի երկրորդ, երրորդ եւ քսանմեկերորդ մասերի, 188 եւ 182 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների կապակցությամբ կայացված վարչական տույժ նշանակելու մասին որոշումների, որոնց դեպքում վարչական տույժ նշանակելու մասին որոշումը կատարման ենթակա չէ, եթե այն ի կատար չի ածվել կայացման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում: Սույն օրենսգրքի 290 հոդվածին համապատասխան որոշման կատարումը կասեցվելու դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչեւ գանգատը կամ բողոքը քննվելը: Սույն օրենսգրքի 300 հոդվածին համապատասխան որոշման կատարումը հետաձգելու դեպքում վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է մինչեւ հետաձգման ժամկետի լրանալը:

ԽՍՀ Միության եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վարչական իրավախախտումների առանձին տեսակների մասին գործերի որոշումների կատարման համար կարող են սահմանվել այլ ավելի տեւական ժամկետներ:

### ՀՈԴՎԱԾ 305. ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

Եթե սույն օրենսգրքի 123-129-րդ, 132-134.1-րդ եւ 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում, անձը դիմում է ոստիկանություն տուգանքի վճարումը տարաժամկետելու խնդրանքով, ապա վճարումը համարվում է տարաժամկետված դիմումի մեջ նշված ժամկետով, բայց ոչ ավելի, քան 6 ամիս:

Սույն օրենսգրքի 123-129-րդ, 132-134.1-րդ եւ 140-րդ հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ

տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը եռապատկվում է: (Հանել)

Սույն օրենսգրքի 123-129, 131-133 եւ 140 հոդվածներով սահմանված տուգանքը նշանակելու մասին որոշումը իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը տարաժամկետելու դիմումում սահմանված ժամկետում կամ տուգանքը նշանակելու վերաբերյալ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, տուգանքը չվճարելու դեպքում տուգանքի չափը հնգապատկվում է, որը ենթակա է դատական կարգով բռնագանձման: Տուգանքի գումարի բռնագանձման համար վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է 60-օրյա ժամկետը լրանալուց հետո՝ 120 օրվա ընթացքում, դիմել դատարան:

Եթե մանր խուլիգանություն կատարած տասնվեցից մինչեւ տասնութ տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, տուգանքը գանձվում է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից:

Վարչական իրավախախտում կատարելու համար նշանակված տուգանքը խախտողի կողմից մուծվում է կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին:

Ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար նշանակված տուգանքը խախտողը մուծում է կենտրոնական գանձապետարան, բացառությամբ իրավախախտման կատարման տեղում գանձվող տուգանքի:

Սույն օրենսգրքի 43.1-րդ 48-րդ, 54-րդ, 56-58-րդ, 158 (բացառությամբ երկրորդ, երրորդ, տասներկուերորդ, տասնիններորդ եւ քսանմեկերորդ մասերի), 162, 169.16 հոդվածներով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է համայնքային բյուջե, համայնքի վարչական սահմանից դուրս՝ Երեւան քաղաքում, ինչպես նաեւ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց թույլ տված իրավախախտումների համար նշանակված տուգանքը մուտքագրվում է պետական բյուջե: